ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/30

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր «Տեխնո Ուան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Կ. Մուրադյանի
Պատվիրատու «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝ Ռ. Եգանյանի, Պ. Գաբրիելյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տեխնո Ուան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 15.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է վերացնել «Երևանի Մխիթար Հերացու անվան

պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԵՊԲՀ կարիքների համար գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրում, էլեկտրոնային արխիվացման ծրագրերի ներդրում, աուդիտորական ծառայությունների ձեռքբերման» գնանշման հարցման չափաբաժին 1-ով սահմանված գնման առարկայի ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին կատարված հղումների, այդ թվում տեխնիկական բնութագրում նմանատիպ այլ դրույթների և աշխատանքային ռեսուրսներին՝ 6-ը տնտեսագետներին ներկայացող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հաշվապահի որակավորման պահանջները, ինչպես նաև չափաբաժին 2-ով՝ «Մասնագիտական փորձարություն» որակավորման չափանիշի սահմանված պահանջը, այն համապատասխանացնելով գնման առարկայի բուն էությանը:

Ի լրումն 15.05.2019թ. ներկայացված բողոքի, Ընկերությունը 29.05.2019թ. ներկայացրել է բողոքի լրացում և Բողոքներ քննող անձին խնդրել է վերանայել Պատվիրատուի տեխնիկական բնութագրի անորոշություններ ներկայացնող դրույթները և սահմանել Պատվիրատուի կոնկրետ կարիքներին համապատասխանող հստակ ձևակերպված պահանջներ և երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում հստակ պարտավորություններ:

Բողոքներ քննող անձի 16.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 23.05.2019թ. և 05.06.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 05.06.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.06.2019թ.-ին:

2. <u>«Տեխնո Ուան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Տեխնո Ուան» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 10.05.2019թ. ժամը 15:25 շաբաթվա վերջին աշխատանքային օրվա երկրորդ կեսից հետո, հայտարարվել է գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման, էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով գնանշման հարցում:

Գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանում ստանալու ժամկետը սահմանվել է 10.05.2019թ. 15:25-12.05.2019թ. 11:00, որը գրեթե ամբողջությամբ ընդգրկում է ոչ աշխատանքային օրեր և ժամեր:

Պատվիրատուն գնանշման հարցման հայտարարությունը հրապարակել է որպես ԵՊԲՀ կարիքների համար գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերում երեք չափաբաժիններով: Իսկ հրավերով գնման առարկան սահմանվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Հայկական Ծրագրի» ներդրման, էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերում, որոնք խմբավորված են 3 (երեք) չափաբաժիններում.

Չափաբաժին 1-Գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման ծառայություններ

Չափաբաժին 2-Էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման ծառայություններ

Չափաբաժին 3-Աուդիտորական ծառայություններ

Չափաբաժին 1-ի տեխնիկական բնութագրով սահմանվել է «Մատուցողը պետք է ծառայությունը մատուցելու նպատակով տրամադրի թվով 10 որոկավորում ունեցող աշխատակից, որից 4-ը ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ոլորտում մասնագիտացած /ծրագրավորող/, 6-ը տնտեսագետ, որոնք պետք է ունենան ՀՀ ՖՆ-կողմից տրված հաշվապահի որակավորում»:

Հրավերով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում թիվ 1 չափաբաժնի մասում՝ գործառնական հաշվառումների ծրագրային ապահովմսն ծառայությունների, թիվ 2 չափաբաժնի մասով՝ փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման, կառավարման և

պահպանությաւն ծառայությունների, թիվ 3 չափաբաժնի մասով՝ աուդիտորական ծառայությունների մատուցված լինելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի.

2-րդ մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար,

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 22-րդ կետի՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի, հնարավոր մասնակիցներ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի գնման հայտը ներառում է՝ շինարարական ծրագրերի ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստման կամ խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի

Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:

Հրավերի 1-ին չափաբաժնով ըստ էության սահմանվել է «Հայկական Ծրագրի» ձեռքբերում և ներդրում: Ծառայության տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ մատուցվող ծառայությունը պետք է պարունակի համակարգի տեղադրման, ներդրման աշխատանքները և հետներդրումային սպասարկումը, օգտագործողների միաժամանակյա քանակը առավելագույնը 45 օգտագործող, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 2-րդ մասի և մասնավորապես 13-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին՝ կատարվել են հղումներ ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին:

Հրավերի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրով մասնակցի աշխատակիցների համար սահմանվել է այնպիսի որակավորման պահանջ՝ ՀՀ ՖՆ-կողմից տրված հաշվապահի որակավորում, որը պարտադիր է հաշվապահական հաշվառում վարելու համար այն էլ գլխավոր հաշվապահների համար: Մինչդեռ սահմված

Ծառայության ձեռքբերումը չի ենթադրում հաշվապահական հաշվառման վարում և գլխավոր հաշվապահի աշխատանք, հետևաբար այս պահանջը ամբողջությամդ սահմանափակող դրույթ է և հակասում է գնումների օրենսդրության վերը նշված դրույթներին:

Հրավերի 2-րդ չափաբաժինը ըստ էության հանդիսանում է փաստաթղթերի արխիվի կառավարման համակարգի ծրագրային ապահովման ձեռքբերման և ներդրման ծառայություններ. այդ համակարգի ինտեգրում այլ տեղեկատվական համակարգերի հետ, որը պետք է ունենա վեբ ինտերֆեյս և մի շարք այլ ծրագրային պահանջներ և մասամբ միայն արխիվացման և թվայնացման գործողություններ, մինչդեռ որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ սահմանվել է «փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման, կառավարման և պահպանության ծառայությունների» փորձառության պահանջ, ինչն ըստ էության հակասում է գնման առարկայի բուն էությանը և ֆունկցիոնալ գործառնությունների տրամաբանությանը Սա, ըստ էության, մասնակցության սահմանափակման դրույթներ, ինչպես նաև բուն կատարվող գործողություններից տարբերվող պահանջներ պարունակող պահաեջ է:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է վերացնել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԵՊԲՀ կարիքների համար գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրում, էլեկտրոնային արխիվացման ծրագրերի ներդրում, աուդիտորական ծառայությունների ձեռքբերման» գնանշման հարցման չափաբաժին 1-ով սահմանված գնման առարկայի ֆիրմային անվանմանը, կոնկրետ աղբյուրին և արտադրողին կատարված հղումների, այդ թվում տեխնիկական բնութագրում նմանատիպ այլ դրույթների և աշխատանքային ռեսուրսներին՝ 6-ը տնտեսագետներին ներկայացող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հաշվապահի որակավորման պահանջները, ինչպես նաև չափաբաժին 2-ով՝ «Մասնագիտական փորձարություն» որակավորման չափանիշի սահմանված պահանջը, այն համապատասխանացնելով գնման առարկայի բուն էությանը:

Ի լրումն 15.05.2019թ. ներկայացված բողոքի, Ընկերությունը 29.05.2019թ. ներկայացրել է բողոքի լրացում հայտնելով հետրյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի.

Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը՝

պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը

պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ որ գնային պայմանների ամբողջանան և համարժեք նկարագրությանը:

Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

«ԵՊԲՀ կարիքների համար գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրում» գնման առարկան համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի, իրենից ներկայացնում է կառավարման համակարգի ծրագրային ապահովման ձեռքբերում և ներդրում, որը ենթադրում է ընկերության եկամուտների և ծախսերի, ֆինանսական հոսքերի պլանավորման, կադրերի կառավարման, փստաթղթաշրջանառության և հաշվապահական հաշվառման ավտոմատացում՝ համապատասխան տեխնիկական պահանջներ ապահովող ծրագրային ապահովման միջոցով:

Պատվիրատուն տեխնիկական բնութագրով չի ներկայացրել կառավարման գործառնությունների, բիզնես պրոցեսներիմոդելավորման և նախագծման, հաշվապահա-կան հաշվառման վարման և կազմակերպման ծառայությունների ձեռքբերում, սակայն տեխնիկական բնութագրով և իր դիրքորոշմամբ ներկայացնում է աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող գլխավոր հաշվապահի որակավորման անհիմն պահանջ, որը պետք է ներկայացներ հրավերի աշխատանքային ռեսուրսների որակովորման չափանիշի պահանջներում և սահմանված օրինակելի ձևին (Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներ) համապատասխան ներկայացներ անհրաժեշտ փվյալների պահանջ: Մինչդեռ Պատվիրատուն գնման առարկայի տեխնիկական բնութագրում ներկայացրել է գնման առարկայի հատկանիշ չհանդիսացող պահանջներ:

Պատվիրատուն իր դիրքորոշմամբ չի անդրադարձել «Հայկական ծրագրեր» ապրանքային նշանին, ֆիրմային անվանմանը և կոնկրետ աղբյուրին և արտադրողին հրավերով կատարված հղմանը, ինչը կարծում ենք բացատրություն չունի:

Պատվիրատուն առաջին չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի որոշ կետերով ներկայացրել է ծրագրային ապահովման ֆունկցիոնալին վերաբերող այնպիսի անորոշ պահանջներ և ձևակերպումներ, ինչպիսիք են՝

Անսահմանափակ հաշվետվությունների նկարագրման հնարավորություն, որից պարզ չէ թե անսահմանափակը վերաբերվում հաշվետվություններին, թե ներկայացման հնարավորություններին

Ստանալ տարատեսակ հաշվետվություններ

Հաստատել կադրային փաստաթղթերը, որը չի հստակեցնում հաստատումների մեխանիզմները և պահանջները

Աշխատաժամանակի բաշխում, որը նույնպես չի ներկայացնում բաշխման որևէ մեխանիզմ, սկզբունք կամ ալգորիթմ

Նկարագրվող հատուկ աշխատատեղեր պատվիրատուի փաստաթղթաշրջանառության և աշխատակիցների բաշխվածության համապատասխան

Այլ նմանատիպ՝ ոչ հստակ ձևակերպումներ, եզրույթներ, սահմանումներ:

Պատվիրատուն տեխնիկական բնութագրով ներկայացրել է այլ համակարգերի հետ ինտեգրման պահանջ, առանց հստակեցնելու տվյալ համակարգերի (օնլայն ռեժիմով աշխատանք Ինտերնետ Բանկի հետ համակցված, ինտեգրում Treasury, E-Invoicing, b2b.armsoft համակարգերի հետ) հետ ինտեգրման համար անհրաժեշտ տեխնիկական տվյալների՝ տվյալ ծրագրային ապահովումներին հասանելիության, ապահովման պարտավորությունները կամ աջակցման երաշխիքները:

Պատվիրատուն իր դիրքորոշմամբ որոշակի բացատրություններ է ներկայացրել հրավերի 2-րդ չափաբաժնի մասնագիտական փորձառությանը վերաբերվող մեր բողոքին, որը թերևս ընկալելի է, սակայն նույնը չի կարելիս ասել 1-ին չափաբաժնին վերաբերվող անհասկանալի մեկնաբանություններին իսկ ավելի ճիշտ անհիմն արդարացումներին:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքի լրացմամբ խնդրել է վերանայել Պատվիրատուի տեխնիկական բնութագրի անորոշություններ ներկայացնող դրույթները և սահմանել Պատվիրատուի կոնկրետ կարիքներին համապատասխանող հստակ ձևակերպված պահանջներ և երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում հստակ պարտավորություններ:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.05.2019թ. գրությամբ դիմել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Տեխնո Ուան» ՍՊԸ-ի կողմից 15.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 22.05.2019թ. թիվ 09/597 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «Տեխնո Ուան» ՍՊԸ-ի կողմից 15.05.2019թ. ներկայացված բողոքը, հայտնում եմ որ՝ «Տեխնո Ուան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները՝

Սույն թվականի մայիսի 8-ին ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության թիվ 1 որոշմամբ հաստատվել են հրավերի և հայտարարության տեքստերը:

Սույն թվականի մայիսի 10-ին էլեկտրոնային «armeps» համակարգի միջոցով հրապարակվել են ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

Էլեկտրոնային համակարգով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանում ստանալու պահանջ ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել՝ 12.05.2019թ. ժամը 11:00-ն:

ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաները խմբավորված են երեք չափաբաժիններում, և յուրաքանչյուրը հանդիսանում է առանձին գնման առարկա՝

Չափաբաժին ների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	***Գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման ծառայություններ***
2	***Էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման ծառայություններ***
3	***Աուդիտորական ծառայություններ***

ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով, յուրաքանչյուր չափաբաժնով սահմանված գնման առարկայի համար մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Մինչև գնման գործընթացի կազմակերպումը, բոլոր երեք գնման առարկաները ներառված են եղել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի տարեկան գնումների պլանում:

ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմված գնման առարկային համարժեք Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանում նախատեսվում է ներդնել գործառնական հաշվառումների ծրագրային ապահովում, որը պետք է հնարավորություն տա ավտոմատացնել համալսարանի և հիվանդանոցային երկու համալիրների ամբողջ

հաշվապահական հաշվառման համակարգը (այդ թվում՝ 33,000 և ավելի միավոր հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, աշխատավարձի հաշվառումը) և բիզնես գործընթացների որոշ մասը (այդ թվում՝ կադրային հաշվառում, 7000 ուսանողների և կլինիկական օրդինատորների հետ կապված գործարքների հաշվառում և այլն): Նշվածը ենթադրում է հսկայածավալ աշխատանքներ, մասնավորապես՝ բոլոր սինթետիկ և անալիտիկ հաշիվների մնացորդների մուտքագրում ծրագիր, ներդրման ժամանակահատվածում կատարված բոլոր գործառնությունների՝ ծրագիր մուտքագրում, համալսարանի շուրջ 45 հաշվապահների և այլ մասնագետների ուսուցանում, նրանց հետ տևական և ամենօրյա աշխատանք:

Համոզված եմ, որ նման ծավալի և բարդության նախագծի հաջողության գրավականը կարիքին համարժեք ժամանակահատվածում գործառնական հաշվառումների ծրագրի ճշգիտ տեղայնացումն է համալսարանում՝ հաշվի առնելով հաշվապահական հաշվառման բոլոր յուրահատկությունները:

Նշվածը ենթադրում է համալսարանի հաշվապահական հաշվառման գործընթացների մոդելավորում, փաստաթղթաշրջանառության սահուն կազմակերպում բոլոր բաժինների միջև, բարդ և մեծածավալ գործարքների ավտոմատ հաշվառման հնարավորության ապահովում և ի վերջո, այդ ամենի իրականացումը գործառնական հաշվառումների ծրագրի միջոցով:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված է նաև ծրագրի եփներդրումային սպասարկումը:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված՝ «Մատուցողը պետք է ծառայությունը մատուցելու նպատակով տրամադրի թվով 10 որոկավորում ունեցող աշխատակից՝ որից 4-ը ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ոլորտում մասնագիտացած /ծրագրավորող/, 6-ը՝ տնտեսագետ, որոնք պետք է ունենան ՀՀ ՖՆ-կողմից տրված հաշվապահի որակավորում» պահանջը չի հանդիսանում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջ՝ ինչպես պնդում է բողոք ներկայացրած անձը: Հրավերով հստակ սահմանված է «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջը, իսկ 10 որոկավորում ունեցող աշխատակցի անհրաժեշտության պահանջը սահմանված է հրավերի տեխնիկական բնութագրով:

Ձեզ եմ ներկայացնում ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագրով սահմանված՝ կարիքին

համարժեք ծառայության մատուցման համար, 10 որոկավորում ունեցող աշխատակցի անհրաժեշտության պահանջի հիմնավորումը՝

1. Մատուցվող ծառայության ծավալը՝ վեց ամսվա ընթացքում Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանում եռներդրումային սպասարկման պայմանով ներդնել հաշվապահության, հիմնական միջոցների, կադրերի և պահեստի գործառնական հաշվառումների ծրագրայի ապահովում:

Ծավալ՝

Ա. Օգտագործողների միաժամանակյա քանակ՝ առավելագունը 45 օգտագործող

Բ. Աշխատակիցների քանակ՝ 3200 աշխատակից

Գ. Ուսանողների և կլինիկական օրդինատորների քանակ՝ 7000

Դ. Թվով 2 հիվանդանոցային համալիրներ

Ե. Հիմնական միջոցների քանակ՝ 33367 միավոր

2. Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է՝ 30 մլն. ՀՀ դրամ, հիմք՝ հրապարակված գնումների պլան:

3. Պահանջվող ծառայությունը ներառված չէ գնումների կազմակերպման կարգը հաստատող ՀՀ կառավարության որոշման թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ծառայությունների ցանկում, այդ իսկ պատճառով հարվերի «Աշխատանքային ռեսուրսներ» որոկավորման չափանիշ սահմանված չէ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ մեր կողմից հնարավոր մասնակիցների նկատմամբ սահմանվել են որոշակի պահանջներ: Գտնում եմ, որ նման բարդության և 30 մլն. ՀՀ դրամ նախահաշվային արժեք ունեցող ծառայության մատուցման համար մասնակցի աշխատակիցները, կամ ժամանակավորապես և նպատակային աշխատանքի ընդունված աշխատակիցները պետք է միաժամանակ ունենան ոչ միայն ավտոմատացման, այլև հաշվապահական հաշվառման խորը գիտելիքներ, ինչը հնարավորություն կտա խորությամբ ուսումնասիրելու և մոդելավորելու յուրաքանչյուր բաժնի աշխատանքը, իրականացվող գործառնությունները:

Հաշվապահի որակավորում ունեցող առնվազն 6 մասնագետի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր բաժնում զուգահեռ պետք է աշխատի առնվազ 1 որակավորված մասնագետ, մասնավորապես՝ աշխատավարձի բաժնում, կադրերի բաժնում, հիմնական միջոցների բաժնում, պաշարների հաշվառման բաժնում, ուսանողների հետ կապված գործարքների հաշվառման բաժնում և երկու հիվանդանոցային համալիրում:

Ուսումնասիրելով մեր և այլ համալսարանների փորձը, եկել եմ այն եզրակացության, որ նմանատիպ մեծ նախագիծ իրականացնելիս ի հայտ են գալիս միայն տվյալ ընկերությանը բնորոշ յուրահատուկ ռիսկեր և խնդիրներ, որոնք պահանջում են արագ ծրագրային փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն, որն էլ անհնար է առանց որակավորված ծրագրավորողների մասնակցության:

Ծրագրային փոփոխությունների դանդաղումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է ռիսկի տակ դնել ամբողջ նախագծի իրականացումը՝ հանգեցնելով էական վնասների: Սրանով էլ պայմանավորված է առնվազն որակավորված 4 ծրագրավորողի առկայության պահանջը: Գտնում եմ, որ մասնակիցը պետք է բավարարի վերոնշված պայմաններին, որն էլ երաշխիք կհանդիսանա գործառնական հաշվառումների ծրագրի հաջող ներդրման և հետագա տարիների արդյունավետ աշխատանքի համար:

Ինչ վերաբերում է ՀՀ ՖՆ կողմից որպես հաշվապահ որակավորմանը, ապա այսօր ՀՀ-ում հաշվապահների որակավորում իրականացնում է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը: Նշված վկայականի առկայությունը երաշխավորում է մասնակցի աշխատողների բարձր մասնագիտական պատրաստվածության, ՀՀ օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների իմացության մասին: Իսկ նշվածի առկայությունը անհրաժեշտ պայման է կարիքին համարժեք ժամանակա-հատվածում նման հսկայածավալ նախագիծ իրականացնելու համար:

Այսպիսով, արձանագրում եմ, որ բողոքը չի վերաբերվում հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին, այլ վերաբերվում է 1-ին չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրին:

Տեխնիկական բնութագրով սահմանված՝ 10 որոկավորում ունեցող աշխատակիցների անհրաժեշտության պահանջը համարժեք է՝ ուղղակիորեն բխում է հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների կատարման անհրաժեշտությունից, չի կարող հանդիսանալ արհեստական խոչընդոտ այն հնարավոր մասնակիցների համար, որոնք հնարավորություն ունեն հրավերով սահմանված ժամանակահատվածում իրականացնելու տեխնիկական բնութագրով սահմանված ծառայության պատշաճ մատուցումը:

ՀՀ աշխատանքային օրեսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝

1. Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե սույն օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

2. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամանակահատվածով կամ օրացուցային ժամկետի սահմանումով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման սահմանումով:

3. Որոշակի ժամկետով պայմանագրեր կնքվում են նաև՝

1) ընտրովի պաշտոններում աշխատողների հետ՝ ընտրված ժամանակահատվածով.

2) համատեղությամբ աշխատանք կատարողների հետ.

3) սեզոնային աշխատանքներ կատարողների հետ.

4) ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանքներ կատարողների հետ.

5) ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ.

6) օտարերկրացիների հետ՝ աշխատանքի թույլտվության կամ կացության իրավունքի վավերականության ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝

Մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Վերոնշյալ օրենսդրական հղումներից պարզ երևում է որ յուրաքանչյուր ծառայության մատուցման նպատակով գործուտուն հնարավորություն ունի որոշակի ժամկետով ընդունել աշխատանքի պահանջվող մասնագետներին, համապատասխան գործառույթի իրականացման նպատակով կամ հնարավորություն ունի գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով:

Բացի այդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ուստի, գտնում եմ, որ ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները հնարավորություն են տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում, սահմանված է «կամ համարժեք» արտահայտությունը:

ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված բողոքը անհասկանալի է և անընդունելի:

ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի մասով, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ սահմանվել է «փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման, կառավարման և պահպանության ծառայությունների» մատուցված լինելու պահանջը: Գնման առարկան, ինքն իրենից ներկայացնում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման, դրանց կառավարման և մշտական պահպանության ծառայություններ: Ուստի, գտնում եմ, որ 2-րդ

չափաբաժնի մասով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանված է սպառիչ և առանց երկակի մեկնաբանության:

Հաշվի առնելով ներկայացված պարզաբանումները և փաստարկները առաջարկում եմ բողոքի քննության ժամանակ նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկայի առանցք, ինչը մեր համոզմամբ հիմք կհանդիսանա ներկայացված բողոքի հիմքերի մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ԵՊԲՀ կարիքների համար գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման, էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.05.2019թ. հայտարարվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով գնման առարկան խմբավորված է 3 (երեք) չափաբաժիններում.

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*Գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման ծառայություններ*
2	*Էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման ծառայություններ*
3	*Աուդիտորական ծառայություններ*

Պատվիրատուն թիվ 1 չափաբաժնով սահմանել է, որ ծառայություններ մատուցողը պետք է ծառայությունը մատուցելու նպատակով տրամադրի թվով 10 որոկավորում ունեցող աշխատակից՝ որից 4-ը ինֆորմատիկայի և կիրառառկան մաթեմատիկայի ոլորտում մասնագիտացած /ծրագարավորող/, 6-ը՝ տնտեսագետ, որոնք պետք է ունենան ՀՀ ՖՆ-կողմից տրված հաշվապահի որակավորում:

Նախատեսվել է վերը նշված ծառայության մատուցման համար հետևյալ ծավալները.

- Օգտագործողների միաժամանակյա քանակ՝ առավելագունը 45 օգտագործող
- Աշխատակիցների քանակ՝ 3200 աշխատակից
- Ուսանողների և կլինիկական օրդինատորների քանակ՝ 7000
- Թվով 2 հիվանդանոցային համալիրներ
- Հիմնական միջոցների քանակ՝ 33367 միավոր:

Թիվ 2 չափաբաժնով սահմանվել է, որ համակարգը պետք է ունենա բազմակապ կառուցվածք, ստանդարտ RDBMS (պետք է տրամադրվի խորհրդատուի կողմից), Web native standard workflow (W3C համատեղելի, պետք է տրամադրվի խորհրդատուի կողմից), վեբ ինտերֆեյս (Full web interface), XML համատեղելի կառուցվածք, լիարժեք հայերենի հնարավորություն (օգտվողի ինտերֆեյսի և դաշտերի արժեքների համար հայկական այբուբենի կիրառման հնարավորություն), APIs առնվազն մեկ ստանդարտ լեզվով:

Հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում թիվ 1 չափաբաժնի մասով՝ գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ծառայությունների, թիվ 2 չափաբաժնի մասով՝ փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման, կառավարման և պահպանության ծառայությունների.....:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած

մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տեխնո Ուան» ՍՊԸ-ի կողմից 15.05.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝

գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 10.05.2019թ. հայտարարվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Պատվիրատուն հայտարարված Ընթացակարգով 1-ին և 2-րդ չափաբաժիններով ցանկամում է ձեռքբերել գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման և Էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման ծառայություններ:

Վերը նշված ծառայությունների ներդրման նպատակով Պատվիրատուն յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին սահմանել է տեխնիկական բնութագրեր հաշվի առնելով նշված ծառայությունների բոլոր առանձնահատկությունները:

Մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված գնման առարկային համարժեք Պատվիրատուն նախատեսում է ներդնել գործառնական հաշվառումների ծրագրային ապահովում, որը պետք է հնարավորություն ընձեռնի ավտոմատացնել համալսարանի և հիվանդանոցային երկու համալիրների ամբողջ հաշվապահական հաշվառման համակարգը, այդ թվում նաև 33 000 և ավելի միավոր հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, աշխատավարձի հաշվառման և բիզնես գործընթացների որոշ մասի, այդ թվում՝ կադրային հաշվառման, 7000 ուսանողների և կլինիկական օրդինատորների հետ կապված գործարքների հաշվառումն: Նախատեսվում է նաև շուրջ 45 հաշվապահների և այլ մասնագետների ուսուցանում, նրանց հետ տևական և ամենօրյա աշխատանք:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված՝ /ծառայություն մատուցողը պետք է ծառայությունը մատուցելու նպատակով տրամադրի թվով 10 որոկավորում ունեցող աշխատակից՝ որից 4-ը ինֆորմատիկայի և կիրառառկան մաթեմատիկայի ոլորտում մասնագիտացած /ծրագարավորող/, 6-ը՝ տնտեսագետ, որոնք պետք է ունենան ՀՀ ՖՆ-կողմից տրված հաշվապահի որակավորում/ պահանջը չի հանդիսանում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջ, այդ պահանջը սահմանված է հրավերի տեխնիկական բնութագրով:

Սույն դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընթացակարգի հրավերով 1-ին չափաբաժնի համար տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները

հնարավորություն են տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում, սահմանված է «կամ համարժեք» արտահայտությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքում 2-րդ չափաբաժնի մասով նշված հիմքերին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի մասով, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ սահմանվել է «փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման, կառավարման և պահպանության ծառայությունների» մատուցված լինելու պահանջը, որն ամբողջությամբ համընկնում է Պատվիրատուի կողմից 2-րդ չափաբաժնով հայտարարված գնման առարկայի անվանման հետ, ուստի 2-րդ չափաբաժնի մասով որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ նմանատիպ պայմանագրերի ներկայացման պահանջը Պատվիրատուի կողմից սահմանված է սպառիչ և առանց երկակի մեկնաբանության:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից 10.05.2019թ. հայտարարված «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն նման բնութագրեր սահմանելով ապահովել է մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ գնումների գործընթացում չի առաջացվել: Բացի այդ նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տեխնո Ուան» ՍՊԸ-ի կողմից 15.05.2019թ.-ին ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**